Կազմված է 08.11.2018 թ. և բաղկացած է 20 թերթից

Տպագրված է 2 օրինակ
Օրինակ 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի Համայնքների Միություն» հասարակական կազմակերպության կայացած հիմնադիր ժողովի որոշմամբ 28.02.2017 թ.-ին

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

"01" 02 2019թ.

«Հայաստանի Համայնքների Միություն» Հասարակական կազմակերպության տնօրեն՝ Ն. Լափաուրի

գրանցման համար՝ 211.171.1056248

հվհհ՝ 03534085

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Երևան 2018 թ.

1. Ընդհանուր դրույթներ

1.1. «Հայաստանի համայնքների միություն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Միություն) սույն կանոնադրության 3-րդ կետով սահմանված նպատակների և 4-րդ կետ սահմանված գործողությունների իրականացման և խթանման համար ստեղծված հասարակական միավորում է, որն ունի հասարակական կազմակերպության կարգավիճակ:

1.2. Միությունը ստեղծվել է «Հասարակական կազմակերպությունների» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներին համապատասխան և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

1.3. Միությունը հիմնադրվել է «Հայաստանի Համայնքների Միություն» իրավաբանական անձանց միության (211.150.05154, գրանցված՝ 2009-09-07-ին, հվհհ՝ 03534085)-ի ՀՀ օրենսդրության համաձայն վերակազմավորման արդյունքում և հանդիսանում է դրա իրավահաջորդը:

1.4. Միության անվանումն է՝

Հայերեն լեզվով՝

լրիվ՝ «Հայաստանի համայնքների միություն» հասարակական կազմակերպություն

կրճատ՝ «Հայաստանի համայնքների միություն» ՀԿ

Անգլերեն՝

լրիվ՝ "Union of Communities of Armenia" Non-governmental organization

կրճատ՝ "Union of Communities of Armenia" NGO

1.5. Միության գործունեության խնդիրները, նպատակները և գործունեության առարկան հիմնված են սույն կանոնադրության 2.1-րդ կետում սահմանված սկզբունքների վրա:

1.6. Միությունը իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում իր պետական գրանցման պահից, ունի հայերեն և անգլերեն անվանումներով կլոր կնիք, պաշտոնաթղթեր, Միությունը կարող է ունենալ խորհրդանիշներ, բացել հաշվարկային և այլ հաշիվներ բանկերում ինչպես դրամով, այնպես էլ արտարժույթով:

1.7. Միությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Միությունը կարող է գործել արտասահմանյան երկրներում՝ այդ երկրների օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

1.8. Միությունն օգտվում է ՀՀ օրենսդրությամբ իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքներից և կրում է համապատասխան պարտականություններ:

1.9. Միությունը կարող է իր կանոնադրական նպատակներից և խնդիրներից բխող առաջարկություններ ներկայացնել ՀՀ պետական մարմիններին:

1.10. Միությունը համագործակցում է ինչպես ՀՀ պետական և ոչ պետական մարմինների, արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների, այնպես էլ անհատ անձանց հետ:

1.11. Միությունը իրավունք ունի նաև հիմնադրել և անդամակցել տեղական կազմակերպությունների, որոնց գործունեության բնույթը համապատասխանում է Միության հիմնադրման և գործունեության հիմնական խնդիրներին, կամ որոնց անդամակցելը կամ հիմնադրելը կնպաստի նշված խնդիրների լուծմանը և իրականացմանը: Նույն նպատակով Միությունը կարող է նաև անդամակցել միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների:

1.12. Միությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է հիմնել լրատվության միջոցներ, զանգվածային լրատվության միջոցներով տեղեկատվություն տարածել իր քաղաքականությունների և գործունեության վերաբերյալ:

1.13. Միությունը իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալ դրա մասնակից:

1.14. Միությունը վարում է ձեռնարկատիրական գործունեության առանձնացված հաշվառում՝ դրա վերաբերյալ տեղեկությունները ներառելով օրենքով նախատեսված հաշվետվություններում: Կազմակերպության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված շահույթը օգտագործվում է միայն կազմակերպության կանոնադրական նպատակների ուղղությամբ:

1.15. Միության անդամները պահպանում են իրենց ինքնուրույնությունն ու իրավունքները:

1.16. Միության գործունեության ժամկետը չի սահմանափակվում:

1.17. Միության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Աբովյան, Աբովյանի քաղաքապետարան, Բարեկամության հրապարակ 1:

2. Միության սկզբունքները

2.1. Միության գործունեությունը հիմնված է հետևյալ կազմակերպական սկզբունքների վրա.

2.1.1. օրինականություն,

2.1.2. հարգանք միության անդամների իրավունքների և ինքնուրույնության նկատմամբ, այդ թվում նաև անկողմնակալությունը բոլոր անդամների հանդեպ, անդամության կամավորություն, անդամների շահերի ընդանիրություն:

2.1.3. իրավական, ֆինանսական և քաղաքական անկախություն՝ իր գործողության և կառավարման մեջ,

2.1.4. ապակուսակցականություն՝ Միությունը գործում է ի շահ իր անդամների՝ անկախ նրանց կուսակցական հայացքներից,

2.1.5. կազմակերպական արդյունավետություն՝ սահմանափակ ռեսուրսներով առավելագույն արդյունքի հասնելու նպատակով,

2.1.6. բարեխղճություն՝ ներառյալ հաշվետվողականությունը, թափանցիկությունը, արհեստավարժությունը, էթիկան և կոռուպցիայի կանխարգելումը,

2.1.7. կոլեգիալություն Միության աշխատանքներում և որոշումների կայացման գործընթացում,

2.1.8. խտրականության բացառում և արդարություն,

2.2. Միությունը կարևորում է նաև քաղաքային և քաղաքային բնակավայր ներառող համայնքների և գյուղական համայնքների՝ համամասնորեն ներկայացված լինելու սկզբունքը:

3. Միության նպատակները և խնդիրները

3.1. Միության հիմնական նպատակն է խթանել և նպաստել տեղական ինքնակառավարման և ժողովրդավարության զարգացմանը Հայաստանում, և առաջ մղել ու պաշտպանել իր անդամ համայնքների իրավունքներն ու օրինական շահերը:

3.2. Միության գործունեության խնդիրներն են՝

3.2.1 նպաստել Հայաստանում ժողովրդավարական տեղական ինքնակառավարման համակարգի զարգացմանն ու Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիայի և ՀՀ Սահմանադրությամբ ու օրենքներով սահմանված սկզբունքերի արդյունավետ կիրառմանը, ինչպես նաև նպաստել դրանց վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացմանը,

3.2.2 հանդես գալ որպես Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմինների միասնական ձայն Կառավարության և պետական այլ մարմինների, միջազգային կազմակերպությունների հետ հարաբերություններում՝ արդյունավետ կերպով ներկայացնելով իր անդամ համայնքների շահերը և ապահովելով իր անդամ համայնքների իրավունքների/շահերի պաշտպանությանն ուղղված գործունեություն,

3.2.3 ներազդել քաղաքական օրակարգի վրա՝ դրական դերակատարում ունենալով պետական կառավարման բոլոր մակարդակներում՝ ներառյալ ակտիվ մասնակցություն համապատասխան խորհրդակցությունների, համագործակցությունների և բանակցությունների գործընթացների ընթացակարգերի մշակման և դրանց կիրառման գործընթացներում,

3.2.4 աջակցել Միության անդամներին՝ տրամադրելով նրանց խորհրդատվական, կարողությունների զարգացման և այլ անհրաժեշտ ծառայություններ՝ հանդես գալով որպես համագործակցության, փորձի փոխանակման և կարողությունների զարգացման հարթակ,

3.2.5 նպաստել Հայաստանում ժողովրդավարական արժեքների՝ ներառյալ ընտրական համակարգում բարեփոխումների, ժողովրդավարական քաղաքական ու իրավական մշակույթի և քաղաքացիական հասարակության զարգացման ամրապնդմանը:

4. Միության գործունեության առարկան

4.1. Սույն Կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար Միությունը կարող է իրականացնել մի շարք գործողություններ, այդ թվում մասնավորապես՝

4.1.1. իրականացնել շահերի պաշտպանության և լոբբիստական գործունեություն Ազգային ժողովի, Կառավարության և պետական կառավարման այլ մարմինների հետ հարաբերություններում,

4.1.2. կազմակերպել հանդիպումներ, համագումարներ, համաժողովներ, սեմինարներ, ցուցադրություններ, տոնավաճառներ և այլ միջոցառումներ,

4.1.3. կազմակերպել փորձի փոխանակման, վերապատրաստման և կարողությունների զարգացման միջոցառումներ, տրամադրել խորհրդատվական ծառայություններ,

4.1.4. ձևավորել հանձնաժողովներ, աշխատաքային խմբեր և այլ աշխատանքային մարմիններ իր քաղաքականությունների մշակման, այդ թվում՝ օրենքների և իրավական ակտերի վերաբերյալ միասնական դիրքորոշում մշակելու նպատակով,

4.1.5. հաղորդակցության առկա համապատասխան միջոցներով՝ ներառյալ տպագիր և էլեկտրոնային հրատարակությունների, կայքէջի, զանգվածային լրատվամիջոցների և սոցիալական ցանցերի միջոցով կապ պահել անդամների և հանրության հետ,

4.1.6. համագործակցել այլ երկրների տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական իշխանությունների ասոցիացիաների և միջազգային կազմակերպությունների հետ, անդամագրվել տեղական և միջազգային կազմակերպությունների և մասնակցել դրանց աշխատանքներին,

4.1.7. խթանել Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմինների, տարածքային մարմինների և հարևան երկրների միջև միջսահմանային համագործակցությունը՝ երկկողմ և բազմակողմ հարաբերություններ ապահովելով հարևան պետությունների ՏԻՄ-երի և դրանց ասոցիացիաների հետ:

5. Միության անդամությունը, միության անդամ դառնալու կարգը

5.1. Միության անդամ կարող են դառնալ Հայաստանի Հանրապետության համայնքները, որոնք՝

5.1.1 ընդունում են սույն կանոնադրությունը, դրա նպատակները, գործունեության առարկան ու խնդիրները,

5.1.2 Միությանը, ինչպես նաև Միության հիմնադրումից առաջ «Հայաստանի Համայնքների Միություն» Իրավաբանական անձանց միությանը անդամակցելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշում են կայացրել, որում նշված է նաև Միության կողմից սահմանված՝ վճարման ենթակա անդամավճարի չափը:

5.2 Միության անդամ դառնալու համար համայնքները համայնքի ղեկավարի կամ ավագանու կողմից լիազորված անձի միջոցով Միության Վարչություն պետք է ներկայացնեն գրավոր դիմում և տվյալ համայնքի ավագանու որոշումը:

5.3 Միության անդամ ընդունելու բոլոր դիմումները քննվում են Միության վարչության կողմից՝ դրանք ստանալուն պես: Միության Վարչությունը արձանագրային կարգով վավերացնում է բոլոր դիմումները, որոնք համապատասխանում են անդամության պահանջներին: Վարչությունն իր

որոշման վերաբերյալ իրազեկում է անդամության դիմում ներկայացրած համայնքի ավագանուն կամ միջհամայնքային միավորմանը:

5.4 Գործադիր տնօրենը վարում է Միության անդամների հաշվառումը, որը հասանելի է միության բոլոր անդամներին:

6. Միության մասնակցությունից դուրս գալու կարգը

6.1. Միության յուրաքանչյուր անդամ իրավունք ունի ավագանու որոշմամբ դադարեցնել իր անդամությունը Միությունում ֆինանսական տարվա ավարտից հետո՝ այդ մասին նախապես 6 ամիս առաջ գրավոր դիմում ներկայացնելով Միության վարչությանը:

6.2. Միության անդամի անդամությունը կարող է դադարեցվել հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում՝

6.2.1. տվյալ անդամը պարբերաբար կամ կոպտորեն խախտում է սույն կանոնադրության դրույթները, կամ գործում է ի վնաս Միության նպատակներին և խնդիրներին, այդ թվում նաև ինքնուրույն գործում է Միության անունից՝ առանց համապատասխան լիազորություններ ունենալու.

6.2.2. տվյալ անդամը առանց ողջամիտ պատճառաբանության առնվազն մեկ տարով ուշացնում է անդամավճարի վճարումը:

6.3. Միության անդամությունը կարող է կասեցվել հստակ սահմանված ժամկետով սույն կանոնադրության 6.2 ենթակետերով սահմանված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում, եթե կասեցումը համարվում է ավելի նպատակահարմար, քան անդամության դադարեցումը: Անդամության կասեցման դեպքում Միության անդամը անդամության կասեցման ողջ ժամանակահատվածում չի կարող մասնակցել Միության կառավարման մարմինների աշխատանքներին, մասնակցել որևէ քվեարկության և/կամ ընդգրկվել Միության ազգային ու միջազգային պատվիրակությունների կազմում:

6.4. Միության անդամի անդամության դադարեցման կամ կասեցման հարցի վերաբերյալ որոշումն ընդունվում է Հանրապետական խորհրդի կողմից՝ մասնակիցների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի մասնակցության և քվեարկության դեպքում: Միության անդամը պետք է առնվազն 28 օր առաջ գրավոր կերպով ծանուցվի անդամության կասեցման կամ դադարեցման մտադրության մասին և իրավունք ունի գրավոր կամ բանավոր դիմել Հանրապետական խորհրդին նախքան վերջինիս կողմից համապատասխան որոշում ընդունելը:

7. Միության անդամների իրավունքներն ու պարտականությունները

7.1. Միության անդամի իրավունքներն են՝

7.1.1. համայնքի ղեկավարի միջոցով մասնակցել անդամների ընդհանուր ժողովին, Միության կառավարման մյուս մարմինների և խորհրդատվական մարմինների աշխատանքներին, Միության կողմից իրականացվող գործունեությանը,

7.1.2. սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր ներկայացուցչի միջոցով ընտրել և ընտրվել Միության կառավարման կամ այլ պաշտոնական մարմիններում,

7.1.3. Միության կառավարման մարմինների քննարկմանը ներկայացնել Միության գործունեության և ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ, դիտողություններ, գործնական ծրագրեր,

7.1.4. ազատորեն արտահայտել սեփական տեսակետը բոլոր վերաբերելի հարցերի հետ կապված՝ իր ներկայացուցչի միջոցով,

7.1.5. Միությունից ստանալ համապատասխան աջակցություն իր օրինական շահերի պաշտպանության համար,

7.1.6. մասնակցել Միության կողմից կազմակերպված միջոցառումներին, ընդգրկվել Միության ազգային ու միջազգային պատվիրակությունների կազմում,

7.1.7. սպառիչ տեղեկատվություն ստանալ Միության գործունեության մասին,

7.1.8. ծանոթանալ Միության կառավարման մարմինների աշխատանքի արձանագրման մասին փաստաթղթերին, ստանալ դրանց ընդունած որոշումների պատճենները,

7.1.9. վերադասության կամ դատական կարգով բողոքարկելու Միության կառավարման մարմինների որոշումները: Կազմակերպության անդամի կողմից գործադիր մարմնի որոշումների բողոքարկումն իրականացվում է Միության կառավարման մարմիններին համապատասխան դիմում ներկայացնելու եղանակով: Դիմումը քննարկվում է Միության կառավարման մարմինների կողմից և կայացվում է դիմումը բավարարելու/մասնակի բավարարելու կամ մերժելու/մասնակի մերժելու մասին որոշում:

7.1.10. կամովին դուրս գալ Միությունից սույն կանոնադրությամբ սահմանված կարգով և ժամկետներում,

7.1.11. ունենալ օրենքով և սույն Կանոնադրությամբ սահմանված ցանկացած այլ իրավունք:

7.2. Միության անդամը պարտավոր է՝

7.2.1. կատարել Միության կանոնադրության պահանջները և կառավարման մարմինների որոշումները,

7.2.2. մուծել իր համար սահմանված անդամավճարը,

7.2.3. բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականությունները, այդ թվում՝ մասնակցել կառավարման մարմինների աշխատանքներին,

7.2.4. նպաստել Միության ծրագրերի իրականացմանը,

7.2.5. խուսափել հանդես գալ Միության անունից՝ առանց Միության համապատասխան մարմնի կողմից լիազորման,

7.2.6. հոգ տանել Միության հեղինակության բարձրացման համար:

8. Միության կառուցվածքը, կառավարման և վերահսկողության մարմինները

8.1. Միության կառավարման մարմիններն են.

- Անդամների ընդհանուր ժողովը,
- Հանրապետական խորհուրդը,
- Վարչությունը,
- Նախագահը,
- Գործադիր տնօրենը:

8.2. Միության ֆինանսական գործունեության և գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է միության Վերստուգիչ հանձնաժողովի կողմից:

9. Միության անդամների ընդհանուր ժողովը

9.1. Միության կառավարման բարձրագույն մարմինը անդամների ընդհանուր ժողովն է (այսուհետև՝ Ընդհանուր ժողով), որին պատկանում է Միության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը: Միության բոլոր անդամներն իրավունք ունեն մասնակցել Ընդհանուր ժողովին՝ իրենց ներկայացուցիչների միջոցով: Յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

9.2. Ընդհանուր ժողովը գումարվում է հինգ տարին մեկ անգամ՝ Հանրապետական խորհրդի կողմից սահմանված ժամանակ և վայրում: Անդամների հերթական ժողովներից բացի Հանրապետական խորհրդի կամ Վարչության նախաձեռնությամբ, Վերստուգիչ հանձնաժողովի, ինչպես նաև անդամների առնվազն 1/3-ի պահանջով կարող է հրավիրվել անդամների արտահերթ ժողով: Անդամների՝ արտահերթ ժողով պահանջելու դեպքում այն պետք է հրավիրվի պահանջը ներկայացնելուց հետո 2 ամսվա ընթացքում:

9.3. Ընդհանուր ժողովը և Արտահերթ Ընդհանուր ժողով կարող է գումարվել ինչպես դրա մասնակիցների համատեղ հավաքի ձևով, այնպես էլ հեռակա մասնակցության կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ, եթե նման որոշում է կայացվել Հանրապետական խորհրդի կողմից: Հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ արտահերթ Ընդհանուր ժողովի կազմակերպման և քվեարկության կարգը հաստատվում է Հանրապետական խորհրդի կողմից: Հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ արտահերթ ընդհանուր ժողովը կարող է քննարկել և քվեարկել միայն սույն կանոնադրության 10.1.5, 10.1.6, 10.1.7 և 10.1.11 ենթակետերով սահմանված հարցերի առնչությամբ:

9.4. Անդամներն առնվազն 25 օր առաջ պետք է տեղեկացվեն Ընդհանուր ժողովի անցկացման ամսաթվի, ժամի և վայրի մասին, ինչպես նաև անդամներին պետք է ուղարկվի Ընդհանուր ժողովի օրակարգի նախագիծը՝ քննարկման ենթակա և քվեարկության դրվող հարցերի վերաբերյալ բավարար տեղեկատվությամբ: Միության Կանոնադրության մեջ փոփոխություն կամ լրացում կատարելու առաջարկության դեպքում ծանուցմանը պետք է կցված լինի նոր խմբագրությամբ կանոնադրության նախագիծը կամ դրանում առաջարկվող փոփոխությունների ցանկը:

10. Ընդհանուր ժողովի իրավասությունները

10.1. Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

10.1.1. Միության կանոնադրությունում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության՝ նոր խմբագրությամբ հաստատումը,

10.1.2. Միության Հանրապետական խորհրդի ձևավորման ընթացակարգերի (կառուցվածքը, անդամների թիվը) և Հանրապետական խորհրդի կազմի

ընտրությունը՝ նախօրոք կազմակերպված համապատասխան վավեր մարզային ընտրությունների արդյունքների հիման վրա,

10.1.3. Միության նախագահի ընտրությունը,

10.1.4. Վերստուգիչ հանձնաժողովի անդամների ընտրությունները,

10.1.5. Միության կողմից այլ իրավաբանական անձի ստեղծումը,

10.1.6. Այլ կազմակերպություններում Միությանն անդամակցելու մասին որոշումներ ընդունելը,

10.1.7. Միության կառուցվածքի հաստատումը,

10.1.8. Միության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,

10.1.9. Միության գույքի փոխանցման ակտի կամ բաժանիչ հաշվեկշռի հաստատումը՝ Միության վերակազմակերպման դեպքում,

10.1.10. Միության լուծարման մասին որոշման ընդունումը, լուծարման հանձնաժողովի ստեղծումը,

10.1.11. Միության մարմինների իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողության դադարեցումը,

10.1.12. այլ հարցերի լուծումը, եթե ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է դրանց լուծումը բացառապես Ընդհանուր ժողովի կողմից և եթե սույն կանոնադրությամբ դրանք չեն փոխանցվել Միության Հանրապետական խորհրդին:

10.2. Հերթական Ընդհանուր ժողովը ի լրումն 10.1 կետով սահմանված իր բացառիկ իրավասությունների՝

10.2.1. լսում է և հաստատում Միության նախագահի կողմից ներկայացված հաշվետվությունը անդամների վերջին ժողովից ի վեր Միության ծավալած գործունեության, Միության ռազմավարության և աշխատանքային ծրագրերի վերաբերյալ,

10.2.2. լսում է և հաստատում Միության գործադիր տնօրենի հաշվետվությունը Միության ֆինանսական դրության վերաբերյալ,

10.2.3. լսում է և հաստատում Վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը,

10.2.4. հաստատում է Հանրապետական խորհրդի կողմից իրեն ներկայացված քաղաքականություններ/ընթացակարգեր, որոշումներ է կայացնում Հանրապետական խորհրդի կողմից իր հաստատմանը ներկայացրած հարցերի վերաբերյալ:

11. Ընդհանուր ժողովի քվեարկության և որոշումների կայացման կարգը

11.1. Միության Ընդհանուր ժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե Ընդհանուր ժողովին մասնակցում են Միության բոլոր անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

11.2. Ստորև թվարկված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են, եթե կողմ են քվեարկել Ընդհանուր ժողովի մասնակիցների ընդհանուր թվի երկու երրորդը, բայց ոչ պակաս, քան Միության բոլոր անդամների մեկ երրորդը.

11.2.1. Միության կանոնադրությունում փոփոխությունների և լրացումների կատարում, կանոնադրության նոր խմբագրությամբ հաստատում,

11.2.2. Միության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,

11.2.3. Միության գույքի փոխանցման ակտի կամ բաժանիչ հաշվեկշռի հաստատումը,

11.2.4. Միության լուծարման մասին որոշման ընդունում, լուծարման հանձնաժողովի ստեղծում:

11.3. Մնացած հարցերով որոշումներն ընդունվում են Միության ընդհանուր ժողովի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

11.4. Միության ղեկավար մարմինների անդամների ընտրությանը վերաբերող Ընդհանուր ժողովի բոլոր որոշումներն ընդունվում են փակ, գաղտնի քվեարկությամբ, եթե մեկ տեղի համար հավակնում է մի քանի թեկնածու:

11.5. Գործադիր տնօրենը ապահովում է Ընդհանուր ժողովի աշխատանքների և որոշումների վերաբերյալ արձանագրությունների կազմումը, որը ստորագրվում է Նախագահի և Ընդհանուր ժողովի քարտուղարի և վավերացվում՝ հաջորդ Ընդհանուր ժողովի կողմից, ինչպես նաև ներկայացվում է Հանրապետական խորհրդին և Վարչությանը:

12. Միության հանրապետական խորհուրդը

12.1. Միության հանրապետական խորհուրդը (այսուհետ՝ Հանրապետական խորհուրդ) ձևավորվում և դրա կազմը ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից հինգ տարի ժամկետով՝ հետևյալ կարգով.

12.1.1. Միության անդամ յուրաքանչյուր քաղաքային և քաղաքային բնակավայր ներառող համայնքի ղեկավար հանդիսանում է Հանրապետական խորհրդի անդամ:

12.1.2. Հանրապետական խորհրդի անդամ գյուղական համայնքների թիվը պետք է առնվազն հավասար լինի հանրապետական խորհրդի անդամ քաղաքային և քաղաքային բնակավայր ներառող համայնքների թվին: Յուրաքանչյուր Ընդհանուր ժողովից առաջ գործող Հանրապետական խորհուրդը Նախագահի առաջարկի հիման վրա սահմանում է յուրաքանչյուր մարզից Հանրապետական խորհրդում ընդգրկվելիք գյուղական համայնքների թիվը՝ յուրաքանչյուր մարզից ոչ պակաս, քան չորս և ոչ ավել, քան ութ համայնք՝ հաշվի առնելով յուրաքանչյուր մարզում առկա համայնքների թիվը: Վերջնական որոշում ընդունելուց առաջ Հանրապետական խորհուրդն իր առաջարկը քննարկում է գյուղական համայնքների ներկայացուցիչների հետ՝ հաշվի առնելով նրանց կարծիքը:

12.1.3. Յուրաքանչյուր մարզի գյուղական համայնքների ղեկավարները փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրում են Միության հանրապետական խորհրդի անդամության տվյալ մարզի գյուղական համայնքների թեկնածուներին: Մարզային ընտրությունների կազմակերպման կարգը մշակում և հաստատում է Հանրապետական խորհուրդը:

12.1.4. Եթե Հանրապետական խորհրդում թափուր տեղ է առաջանում և առաջիկա 3 ամիսների ընթացքում չի նախատեսվում հրավիրել Ընդհանուր ժողով, Վարչությունը որոշում է կայացնում Հանրապետական խորհուրդը նոր անդամով համալրելու վերաբերյալ՝ համապատասխան մարզի գյուղական

համայնքների ղեկավարների կողմից համապատասխան ընտրության կազմակերպման միջոցով:

12.1.5. Միության անդամ կին համայնքի ղեկավարները՝ փակ, գաղտնի քվեարկությամբ առաջադրում են Միության հանրապետական խորհրդի անդամ համայնքների երեք կին ղեկավարների թեկնածությունը:

12.1.6. Միության նախագահը ի պաշտոնե հանդիսանում է Հանրապետական խորհրդի անդամ և հանդիսանում է նաև Միության հանրապետական խորհրդի նախագահողը:

12.1.7. Միության գործադիր տնօրենն ի պաշտոնե հանդիսանում է Հանրապետական խորհրդի անդամ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

13. Հանրապետական խորհրդի լիազորությունները

13.1. Հանրապետական խորհուրդը սահմանում է Միության գործունեության, քաղաքականության և ռազմավարության սկզբունքները, տալիս է մեկնաբանություններ և կարծիքներ տեղական ինքնակառավարմանը վերաբերող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ: Հանրապետական խորհուրդը մասնավորապես որոշումներ է ընդունում հետևյալ խնդիրների վերաբերյալ.

13.1.1. Միության ռազմավարական պլանի, աշխատանքային ծրագրերի և գերակայությունների հաստատում,

13.1.2. Միության տարեկան բյուջեի հաստատում և բյուջեում փոփոխությունների կատարում, այդ թվում՝ անդամավճարների չափի սահմանում,

13.1.3. Միության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ Ընդհանուր ժողովին առաջարկություններ ներկայացում,

13.1.4. Միության, ինչպես նաև նրա մարմինների գործունեության հաշվետվությունների հաստատում,

13.1.5. ՏԻՄ ոլորտին առնչվող քաղաքականությունների, ռազմավարությունների, օրենքների և իրավական ակտերի վերաբերյալ Վարչության կողմից մշակված Միության միասնական դիրքորոշումների հաստատումը,

13.1.6. Միության վարչության ձևավորումը և վարչության կազմի հաստատում, այդ թվում՝ Վարչության նոր անդամի նշանակման կամ ընտրության հաստատում Վարչությունում թափուր տեղ առաջանալու դեպքում՝ սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով,

13.1.7. Միության վարչությանը որոշակի հարցերի լուծման և լիազորությունների պատվիրակումը, վարչությանը պատվիրակված լիազորությունների դադարեցում,

13.1.8. թափանցիկ գործընթացի միջոցով Միության գործադիր տնօրենի ընտրություն՝ Միության նախագահի առաջարկությամբ, Գործադիր տնօրենի հետ աշխատանքային պայմանագրի ստորագրում և պայմանագրի ստորագրման ու լուծման վերաբերյալ որոշման կայացում՝ սահմանված ընթացակարգի համաձայն,

13.1.9. Միության հաստիքացուցակի հաստատում և դրանում փոփոխությունների կատարում,

13.1.10. Միության առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) և հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին որոշումների ընդունում, դրանց ղեկավարների նշանակում ու ազատում, ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարներին լիազորագրերի տրամադրում,

13.1.11. Միության կառուցվածքային ստորաբաժանումների՝ երեք համաժողովների, վեց մշտական հանձնաժողովների և ժամանակավոր հանձնաժողովների ստեղծելու և դրանց կանոնակարգերը հաստատելու մասին որոշումների ընդունում,

13.1.12. նիստերի վարման և ընտրությունների կազմակերպման ընթացակարգերի (ներառյալ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ անցկացվող նիստերի և ընտրությունների), ինչպես նաև սույն կանոնադրությունից բխող ցանկացած այլ ընթացակարգի հաստատում,

13.1.13. Միության աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) ընտրության կատարում,

13.1.14. Միության հերթական և արտահերթ Ընդհանուր ժողովների գումարում և Ընդհանուր ժողովի ընդունած որոշումների իրականացման ապահովում,

13.1.15. Միության անդամի անդամության դադարեցման հարցի վերաբերյալ որոշման ընդունում՝ կետ 6-ում սահմանված ընթացակարգի համաձայն,

13.1.16. սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորությունների կատարում:

14. Հանրապետական խորհրդի աշխատանքների կազմակերպումը

14.1. Միության հանրապետական խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են Միության վարչության կամ նախագահի կողմից առնվազն տարին մեկ անգամ: Միության վարչության կամ նախագահի կողմից ըստ անհրաժեշտության կարող են գումարվել Միության հանրապետական խորհրդի արտահերթ նիստեր: Բացառիկ հրատապության դեպքերից բացի (որի պատճառները պետք է շարադրվեն անդամներին ուղարկվող ծանուցման մեջ), Հանրապետական խորհրդի անդամները պետք է առնվազն 14 օր առաջ ծանուցվեն նիստի կազմակերպման ամսաթվի, ժամի և վայրի մասին և ստանան նիստի օրակարգի նախագիծը:

14.2. Միության հանրապետական խորհուրդը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե դրա նիստին մասնակցում են Հանրապետական խորհրդի անդամների կեսից ավելին: Հանրապետական խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, եթե սույն կանոնադրությամբ այլ բան սահմանված չէ: Ձայների հավասարության դեպքում Միության նախագահի ձայնը վճռորոշ է: Եթե Հանրապետական խորհուրդը որոշում է կայացնում Գործադիր տնօրենի նշանակման վերաբերյալ՝ մի քանի թեկնածուներից ընտրություն կատարելով, ապա Գործադիր տնօրենի նշանակման մասին որոշումը կայացվում է փակ, գաղտնի քվեարկությամբ:

14.3. Միության Հանրապետական խորհուրդը կարող է նիստեր անցկացնել և որոշումներ ընդունել նաև հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության

միջոցների օգտագործմամբ: Նման դեպքերում Հանրապետական խորհուրդը պետք է նախօրոք սահմանի հեռակա կարգով անցկացվող նիստի՝ դրանում մասնակցելու, քվեարկելու և որոշում կայացնելու ընթացակարգերը:

14.4. Գործադիր տնօրենը ապահովում է Հանրապետական խորհրդի նիստերի և որոշումների արձանագրումը, որը ներկայացվում է հաջորդ խորհրդի նիստի հաստատմանը: Բացառությամբ հույժ գաղտնի տեղեկատվություն պարունակող արձանագրությունների՝ Հանրապետական խորհրդի բոլոր նիստերի արձանագրությունները հասանելի են Միության բոլոր անդամներին:

15. Միության վարչությունը

15.1. Միության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) ձևավորվում և Վարչության կազմը հաստատվում է երկու տարի վեց ամիս (2.5 տարի) ժամկետով՝ հետևյալ ընթացակարգով.

15.1.1. Երևանի քաղաքապետը, Գյումրիի քաղաքապետը, Վանաձորի քաղաքապետը ի պաշտոնե հանդիսանում են Միության վարչության անդամ:

15.1.2. Հանրապետական խորհրդի անդամները փակ, գաղտնի քվեարկությամբ, ընտրում են Միության վարչության կազմը՝ յուրաքանչյուր մարզից Հանրապետական խորհրդի անդամներ հանդիսացող մեկ քաղաքային և քաղաքային բնակավայր ներառող համայնքի և մեկ գյուղական համայնքի ղեկավարների,

15.1.3. Ինչպես նաև, Հանրապետական խորհրդի անդամները փակ, գաղտնի քվեարկությամբ իրենց կազմից ընտրում են երկու կին համայնքի ղեկավարների՝ Վարչության կազմում ընդգրկվելու նպատակով:

15.1.4. Միության վեց մշտական հանձնաժողովների նախագահները ի պաշտոնե հանդիսանում են Միության վարչության անդամ:

15.1.5. Միության նախագահը ի պաշտոնե հանդիսանում է Վարչության անդամ և հանդիսանում է նաև Միության վարչության նախագահողը:

15.1.6. Միության գործադիր տնօրենն ի պաշտոնե հանդիսանում է Վարչության անդամ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

15.2. Վարչության ձևավորումը, կազմը և անդամներին (ներառյալ ընթացքում առաջացած թափուր տեղերի համար) հաստատվում է Հանրապետական խորհրդի կողմից՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

16. Վարչության լիազորությունները

16.1. Վարչության լիազորություններն ու պարտականություններն են՝

16.1.1. Միության տարեկան աշխատանքային պլանի իրականացման, Միության ընդհանուր ֆինանսական կառավարման և կառավարման մարմինների որոշումների իրականացման գործընթացների վերահսկողություն,

16.1.2. Ընդհանուր ժողովի և Հանրապետական խորհրդի որոշումների իրականացման ապահովում,

16.1.3. մշտական հանձնաժողովների հետ համագործակցությամբ ՏԻՄ ոլորտին առնչվող քաղաքականությունների, ռազմավարությունների, օրենքների և

իրավական ակտերի վերաբերյալ Միության միասնական դիրքորոշումների մշակում՝ Հանրապետական խորհրդի հաստատման համար, ինչպես նաև հրատապ դեպքերում, երբ հնարավոր չէ սպասել Հանրապետական խորհրդի հաջորդ նիստի գումարմանը Միության անունից միասնական դիրքորոշումների ընդունում,

16.1.4. Միության շահերի պաշտպանության գործունեության համակարգում՝ Ազգային ժողովի, Կառավարության և պետական կառավարման այլ մարմինների հետ հարաբերություններում,

16.1.5. ժամանակավոր հանձնաժողովների և աշխատանքային խմբերի կանոնակարգերի մշակում և հաստատում,

16.1.6. գործադիր տնօրենի և Միության քարտուղարության աշխատանքների վերահսկողություն՝ Միության աշխատանքների բարելավմանն ուղղված կառավարման ներքին կանոնակարգեր և ընթացակարգերի հաստատում,

16.1.7. Միության գործադիր տնօրենի հետ կնքվող աշխատանքային պայմանագրով վարձատրության կարգի և պայմանների սահմանում,

16.1.8. Գործադիր տնօրենի պաշտոնը թափուր մնալու դեպքում՝ ժամանակավոր պաշտոնակատարի նշանակման մասին որոշման ընդունում,

16.1.9. Հանրապետական խորհուրդը նոր անդամով համալրելու որոշումների հաստատում՝ ընթացքում թափուր տեղի առաջացման դեպքում,

16.1.10. անդամ դառնալու վավեր դիմումների հաստատում,

16.1.11. Միության կարգապահական ներքին կանոնների և հրահանգների հաստատում:

17. Վարչության աշխատանքների կազմակերպումը

17.1. Միության վարչությունը իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են Միության նախագահի կողմից կամ, նրա բացակայության դեպքում, Գործադիր տնօրենի կողմից տարին առնվազն չորս անգամ: Միության նախագահի կողմից ըստ անհրաժեշտության կարող են գումարվել Միության վարչության արտահերթ նիստեր: Բացառիկ հրատապության դեպքերից բացի (որի պատճառները պետք է շարադրվեն անդամներին ուղարկվող ծանուցման մեջ), Վարչության անդամները պետք է առնվազն 10 օր առաջ ծանուցվեն նիստի կազմակերպման ամսաթվի, ժամի և վայրի մասին և ստանան նիստի օրակարգի նախագիծը:

17.2. Միության վարչությունը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նրա նիստին մասնակցում են վարչության անդամների կեսից ավելին: Վարչության որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, եթե սույն կանոնադրությամբ այլ բան սահմանված չէ: Ձայների հավասարության դեպքում Միության նախագահի ձայնը վճռորոշ է:

17.3. Միության վարչությունը կարող է նիստեր անցկացնել և որոշումներ ընդունել նաև հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ: Նման դեպքերում հանրապետական խորհուրդը պետք է նախօրոք սահմանի հեռակա կարգով անցկացվող նիստի՝ դրանում մասնակցելու, քվեարկելու և որոշում կայացնելու ընթացակարգերը:

17.4. Գործադիր տնօրենը ապահովում է վարչության նիստերի և որոշումների արձանագրումը, որը ներկայացվում է Վարչության հաջորդ նիստի հաստատմանը: Բացառությամբ հույժ գաղտնի տեղեկատվություն պարունակող արձանագրությունների, Հանրապետական խորհրդի բոլոր նիստերի արձանագրությունները հասանելի են Միության բոլոր անդամներին:

18. Միության նախագահը

18.1. Միության նախագահը ընտրվում է Միության ընդհանուր ժողովի կողմից հինգ տարի ժամկետով փակ, գաղտնի քվեարկությամբ, եթե Նախագահի պաշտոնին հավակնում են մեկից ավելի թեկնածուներ: Միության նախագահի թեկնածու կարող է լինել վերջին հինգ տարիների ընթացքում համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի պաշտոնը զբաղեցնող կամ զբաղեցրած յուրաքանչյուր անձ: Ընտրվելուց հետո Միության նախագահը չի կարող զբաղեցնել պաշտոն տեղական ինքնակառավարման կամ պետական կառավարման մարմիններում կամ իրականացնել որևէ այլ վճարովի աշխատանք: Նախագահը կարող է վերընտրվել:

18.2. Միության նախագահը՝

18.2.1. հրավիրում է և վարում Միության հանրապետական խորհրդի և վարչության նիստերը, վարում և ստորագրում է Միության ընդհանուր ժողովի, Հանրապետական խորհրդի և Վարչության նիստերի արձանագրություններն ու ընդունված որոշումները,

18.2.2. իր իրավասության շրջանակներում ընդունում է որոշումներ,

18.2.3. Միության անունից իրականացնում է ներկայացուցչական լիազորություններ, անում է հայտարարություններ,

18.2.4. համակարգում է Հանրապետական խորհրդի, Վարչության և Միության այլ մարմինների գործունեությունը,

18.2.5. Միության հանրապետական խորհրդին և Ընդհանուր ժողովին ներկայացնում է Միության հանրապետական խորհրդի, վարչության և նախագահի հաշվետվությունները,

18.2.6. իրականացնում է սույն կանոնադրությամբ սահմանված և Հանրապետական խորհրդի և/կամ Վարչության կողմից լիազորած այլ իրավասություններ:

18.3. Միության նախագահի բացակայության կամ նրա պարտականությունների կատարումն անհնարին դարձնող այլ հանգամանքների առկայության դեպքում նրա պարտականություններն ու լիազորություններն իրականացնում են Վարչության մեկ կամ մի քանի անդամներ՝ նախագահի լիազորմամբ, կամ Միության գործադիր տնօրենը: Նախագահը կարող է լիազորել Գործադիր տնօրենին հանդես գալ Միության անունից:

19. Միության գործադիր տնօրենը

19.1. Միության ընթացիկ ղեկավարումն իրականացնում է Միության գործադիր մարմինը՝ Միության գործադիր տնօրենը, որը նշանակվում է Հանրապետական խորհրդի կողմից 13-րդ կետով սահմանված կարգով՝ անորոշ ժամկետով կամ Հանրապետական խորհրդի որոշմամբ՝ որոշակի ժամկետով: Գործադիր տնօրենի աշխատավարձի չափը սահմանում է Վարչությունը: Գործադիր

տնօրեն չնշանակելու դեպքում Միության ընթացիկ գործադիր ղեկավարման աշխատանքները ժամանակավորապես իրականացնում է Միության նախագահը կամ Վարչության կողմից լիազորված այլ անձ:

19.2. Միության գործադիր տնօրենն իր իրավասության շրջանակներում առանց լիազորագրի գործում է Միության անունից՝

19.2.1. ղեկավարում է Միության աշխատակազմը, Միության աշխատողների համար իրականացնում է գործատուի ֆունկցիաներ, այդ թվում՝ կնքում է աշխատանքային պայմանագրեր,

19.2.2. հետևում և ապահովում է կառավարման մարմինների որոշումների իրականացումը,

19.2.3. ներկայացնում է Միության շահերը, ներկայացնում է Միությունն այլ կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում և տարաբնույթ միջոցառումներում,

19.2.4. ներկայացնում է Միության շահերը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

19.2.5. ապահովում է տարեկան աշխատանքային ծրագրի մշակումը և իրականացումը, ինչպես նաև կառավարման մարմինների և հանձնաժողովների նիստերի նախապատրաստումը,

19.2.6. ապահովում է անդամների հետ արդյունավետ հաղորդակցությունը,

19.2.7. կառավարում է Միության ֆինանսական ռեսուրսները, համագործակցում է աուդիտորի և վերստուգիչ հանձնաժողովի հետ, վերստուգիչ հանձնաժողովի համար պատրաստում և ներկայացնում է տարեկան հաշվետվություն,

19.2.8. անդամների հերթական Ընդհանուր ժողովի ժամանակ ներկայացնում է Միության ֆինանսական դրության վերաբերյալ հաշվետվություն,

19.2.9. վարում է անդամների՝ պարբերաբար թարմացվող գրանցամատյանը, ապահովում կառավարման մարմինների բոլոր նիստերի արձանագրությունների կազմումը և դրանց տրամադրումը անդամներին,

19.2.10. ձեռք է բերում և տնօրինում Միության գույքը առանց սահմանափակման,

19.2.11. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

19.2.12. հաստատում է Միության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների, ներքին կարգապահական և այլ կանոնները,

19.2.13. հաստատում է Միության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները,

19.2.14. հինգ տարին մեկ անգամ Ժողովին է ներկայացնում Ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները.

19.2.15. բանակցում է և կնքում պայմանագրեր Միության անունից,

19.2.16. տալիս է լիազորագրեր, բանկերում բացում հաշվարկային և այլ հաշիվներ.

19.2.17. նշանակում և ազատում է Միության ստորաբաժանումների ղեկավարներին,

19.2.18. իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված, սույն կանոնադրությամբ սահմանված և Հանրապետական խորհրդի և/կամ Վարչության կողմից տրված այլ իրավասություններ:

19.2.19. հաստատում է հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը:

19.3. Գործադիր տնօրենը հաշվետու է Վարչությանը:

20. Միության վերստուգիչ հանձնաժողովը

20.1. Վերստուգիչ հանձնաժողովը հանդիսանում է Միության պաշտոնական մարմինը, որը՝

20.1.1. Տարեկան մեկ անգամ անցկացնում է կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում,

20.1.2. հետևում և վերահսկում է Միության ֆինանսական գործունեությունը, ստուգում է ֆինանսական հաշվետվությունները և պլանները,

20.1.3. աշխատում է անկախ աուդիտորի հետ,

20.1.4. հետևում է Միության կառավարման մարմինների գործունեությանը՝ ապահովելու դրանց որոշումների և գործողությունների օրինականությունը,

20.1.5. իր աշխատանքի, ստացած տվյալների և առաջարկությունների վերաբերյալ տարեկան հաշվետվություններ է ներկայացնում Նախագահին և Վարչությանը, անհրաժեշտության դեպքում՝ Հանրապետական խորհրդին և հերթական Ընդհանուր ժողովին,

20.1.6. օրենքի ակնհայտ լուրջ խախտումների դեպքում անհապաղ զեկուցում է Նախագահին և Վարչությանը:

20.2. Միության վերստուգիչը հանձնաժողովը բաղկացած է հինգ անդամից՝ ընտրված հինգ տարի ժամկետով Ընդհանուր ժողովի կողմից: Վերստուգիչ հանձնաժողովի նախագահը ընտրվում է հանձնաժողովի կազմից Վերստուգիչ հանձնաժողովի առաջին նիստում՝ հինգ տարի ժամկետով՝ փակ, գաղտնի քվեարկությամբ: Վերստուգիչ հանձնաժողովի նախագահ և անդամ չեն կարող դառնալ Միության կառավարման մյուս մարմիններում ներգրավված անդամները: Վերստուգիչ հանձաժողովի նախագահի և անդամի թեկնածուներն առաջադրվելիս ունեն նախապատվություն, եթե ունեն ֆինանսական-հաշվապահական կրթություն կամ այդ ոլորտի աշխատանքային փորձ:

20.3. Վերստուգիչ հանձնաժողովը իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են տարեկան մեկ անգամ՝ առնվազն 14 օր առաջ գրավոր ծանուցմամբ: Վերստուգիչ հանձնաժողովի անդամների երկու երրորդի, Հանրապետական խորհրդի անդամների երկու երրորդի կամ Միության նախագահի պահանջով կարող է հրավիրվել արտահերթ նիստ:

20.4. Վերստուգիչ հանձնաժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Վերստուգիչ հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ձայների

պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Վերստուգիչ հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

20.5. Վերստուգիչ հանձնաժողովը կարող է Միության կառավարման ցանկացած մարմնից, դրա անդամներից և Միության աշխատողներից պահանջել Միության գործունեությանը/ֆինանսական միջոցներին, պայմանագրերին և գույքին առնչվող ցանկացած տվյալներ և հաշվետվություն: Գործադիր տնօրենը պետք է Վերստուգիչ հանձնաժողովի նիստին ներկայացնելու համար կազմի հաշվետվություն և ապահովի վերստուգիչ հանձնաժողովի նիստի արձանագրումը:

21. Միության համաժողովները և մշտական հանձնաժողովները

21.1. Միության երեք համաժողովներն են՝

- Ավագանիների համաժողովը,
- Գյուղական համայնքների համաժողովը,
- Համայնքային ծառայողների համաժողովը:

Համաժողովները գումարվում են տարին մեկ անգամ և կարող են ընդունել ուղերձներ, հայտարարություններ, ինչպես նաև մշակել և Միության կառավարման մարմիններին ներկայացնել առաջարկություններ:

21.2. Միությունը ունի վեց մշտական հանձնաժողովներ, որոնք օժանդակում են իրենց մասնագիտացման ոլորտի քաղաքականությունների մշակման և առաջմղման գործին: Հանձնաժողովների մասնագիտացումները որոշում և դրանց կանոնակարգերը հաստատում է Հանրապետական խորհուրդը:

21.3. Հանրապետական խորհրդի յուրաքանչյուր անդամ (բացառությամբ նախագահի) պարտավոր է ընդգրկվել մեկ մշտական հանձնաժողովի կազմի մեջ: Մշտական հանձնաժողովի անդամներ կարող են լինել ինչպես Միության անդամ հանդիսացող բոլոր համայնքների ղեկավարները, այնպես էլ ավագանու անդամները կամ համայնքային ծառայողները:

21.4. Մշտական հանձնաժողովներն իրենց կազմից ընտրում են նախագահ և նախագահի տեղակալներ: Գործադիր տնօրենն իր աշխատակազմից յուրաքանչյուր հանձնաժողովի համար նշանակում է հանձնաժողովի քարտուղար:

21.5. Յուրաքանչյուր մշտական հանձնաժողովի նախագահ ի պաշտոնե հանդիսանում է վարչության անդամ:

21.6. Մշտական հանձնաժողովները և դրանց նախագահները համաձայնեցնում են իրենց աշխատանքները միմյանց և Միության կառավարման մարմինների աշխատանքների հետ:

22. Միության սեփականությունը, դրա օգտագործումը և հաշվետվությունների հրապարակումը

22.1. Անդամների կողմից Միությանը օտարված գույքը հանդիսանում է Միության սեփականությունը:

22.2. Միությունը օգտագործում է իր գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները իր կանոնադրական նպատակների ու խնդիրների իրականացման համար:

22.3. Միությանը սեփականության իրավունքով կարող է պատկանել ՀՀ օրենսդրությամբ չարգելված սեփականության իրավունքի ցանկացած օբյեկտ, այդ թվում նաև դրամական միջոցներ՝ դրամով և տարադրամով:

22.4. Միության նյութական և դրամական միջոցների գոյացման աղբյուրներն են՝

ա) անդամների նախնական ներդրումները, որոնք են՝ հիմնադրման ընթացքում տրամադրված գույքը, միության անդամների ներդրումները և անդամավճարները: Անդամավճարի տարեկան չափը չի կարող լինել տվյալ համայնքի տարեկան բյուջեի 0.1 տոկոսից պակաս և 1 տոկոսից ավել: Անդամավճարի վճարման կարգը սահմանվում է Հանրապետական խորհրդի որոշմամբ.

բ) ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.

գ) իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ կազմակերպությունից ստացված միջոցները.

դ) տեղական, օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների, անհատների կողմից ստացվող ֆինանսական ու նյութական ներդրումները, նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ դրամաշնորհները.

ե) հանգանակությունները.

զ) դրամական մուտքերը պետական բյուջեից,

է) վարկերն ու փոխառությունները,

ը) օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

22.5. Արգելվում է օգտագործել Միության սեփականությունը ոչ կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման ուղղությամբ, բացառությամբ աշխատողների աշխատավարձի և Միության կառավարման մարմինների որոշումով Միության կառավարման մարմինների իրավասությունների կատարման համար անհրաժեշտ՝ փոխհատուցման ենթակա ծախսերի:

22.6. Միությունը պարտավոր է յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտին հաջորդող երկու ամիսների ընթացքում հրապարակել տարեկան հաշվետվություն, այդ թվում նաև տարեկան ֆինանսական հաշվետվություններ: Օրենքով սահմանված դեպքերում Միությունը պարտավոր է հրապարակել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը:

22.7. Սույն կանոնադրության 22.6-րդ կետով նախատեսված տեղեկատվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետներում Միությունը պարտավոր է տրամադրել իր անդամներին՝ նրանց կողմից գրավոր դիմում ներկայացնելու դեպքում:

23. Միության վերակազմակերպումը և լուծարումը

23.1. Միությունը կարող է վերակազմակերպվել Ընդհանուր ժողովի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

23.2. Միությունը համարվում է վերակազմակերպված (բացառությամբ միացման ձևի) նոր առաջացած կազմակերպության՝ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

23.3. Միությունն այլ կազմակերպության հետ միացման ձևով վերակազմակերպելու դեպքում, նրանցից առաջինը վերակազմակերպված է համարվում միացած կազմակերպության գործունեության դադարեցման մասին Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցում կատարելու պահից:

23.4. Միությունը կարող է լուծարվել Ընդհանուր ժողովի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

23.5. Միության լուծարման դեպքում նրա գույքն ուղղվում է Միության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե:

05